

3582



Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԸ

ՅԵՎ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

(ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՋԻՆ ԿՅՑԻ ԱՌԹԻՎ)

3133

17-94

ՀԱՅԿԱՆ ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
1940

ՅԿ 33  
Պ-94  
Արք

28 JUN 2005

Ի. ՍՏԱԼԻՆ 20 NOV 2009

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԸ  
Յ Ե Վ  
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԻՆ ԿԵՏԻ ԱՌԹԻՎ

1905 թ. «Պրովետարիատիս բրձուլա»

(«Պրովետարիատի պայքարը») թերթ:

Թարգմանություն վրացերենից



1337  
40

И. СТАЛИН

КЛАСС ПРОЛЕТАРИЕВ И ПАРТИЯ  
ПРОЛЕТАРИЕВ

По поводу первого пункта  
устава партии

Государственное издательство политической литературы  
Ереван ● 1940

Անցել և այն ժամանակը, յերբ համարձակ կերպով հայտարարում եյին. «միասնական և անբաժանելի Ռուսաստան»: Այժմ յերևան ել դիտե, վոր «միասնական ու անբաժանելի» Ռուսաստան դոյություն չունի, վոր նա վաղուց բաժանվել և յերկու հակադիր դասակարգի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի: Այժմ վոչ վոքի համար դադանիք չի հանդիսանում, վոր պայքարն այդ յերկու դասակարգերի միջև դարձել և այն առանցքը, վորի շուրջը պտտվում և մեր ժամանակակից կյանքը:

Այո՛, այժմ այդ բանն արդեն վոչ վոքի համար գաղտնիք չե:

Բայց և այնպես մինչև ներկա ժամանակն այս ամենը դժվար եր նկատել,—և դա այն պատճառով, վոր մինչև հիմա մենք պայքարի աստրաբեղում տեսնում եյինք միայն առանձին խմբեր, վորովհետև պայքարում եյին լոկ առանձին խմբերն առանձին քաղաքներում և անկյուններում, իսկ պրոլետարիատը և բուրժուազիան, վորպես դասակարգեր, չեյին յերևում, նրանց դժվար եր նկատել: Բայց, ահա, միացան քաղաքներն ու ուսյունները, պրոլետարիատի զանազան խմբերը ձեռք մեկնեցին մեկը մյուսին, բռնկեցին ընդհանուր գործադուլներ և ցույցեր,—և մեր առջև բացվեց յերկու Ռուսաստանների, բուրժուական Ռուսաստանի և պրոլետարական Ռուսաստանի միջև մղվող պայքարի վսեմ պատկերը: Պայքարի ասպարեզ դուրս յեկան յերկու մեծ բանակներ՝ պրոլետարների բանակը և բուրժուաների բանակը, և պայքարն այդ յերկու բանակների միջև ընդգրկեց մեր ամբողջ ժամանակակից պատմությունը:

Քանի վոր բանակը չի կարող գործել առանց ղեկավարների և քանի վոր յուրաքանչյուր բանակ ունի իր առաջավոր ջոկատը, վորը դնում և նրա առջևից և լուսավորում և

նրա ուղին, — ապա պարզ է, վոր այդ բանակների հետ միասին պետք է հանդես գալին և ղեկավարների համապատասխան խմբեր, համապատասխան կուսակցութիւններ, ինչպէս ասում են սովորաբար:

Այսպէս ուրեմն, պատկերն ստացալ հետեյալ տեսքով կողմում բուրժուականների բանակն է՝ լիբերալ կուսակցութեան գլխավորութեամբ, իսկ մյուսում՝ պրոլետարների բանակը՝ սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան գլխավորութեամբ, — յուրաքանչյուր բանակին նրա դասակարգային պայքարում ղեկավարում է սեփական կուսակցութիւնը<sup>1</sup>:

Մենք չուզուեցինք այս ամենը նրա համար, վորպէսզի պրոլետարների կուսակցութիւնը համեմատենք պրոլետարների դասակարգի հետ և դրանով իսկ համառոտակի կերպով պարզենք նրա ընդհանուր ֆիզիոնոմիան:

Ասվածը բավականաչափ պարզեց, վոր պրոլետարների կուսակցութիւնը, վորպէս ղեկավարների մարտական խումբ, նախ, իր անդամների քանակով շատ ավելի փոքր պետք է լինի պրոլետարների դասակարգից. յերկրորդ, իր դիտակցականութեամբ և իր փորձառութեամբ պետք է ավելի բարձր կանգնած լինի պրոլետարների դասակարգից և, յերրորդ, պետք է իրենից ներկայացնի համախմբված կազմակերպութիւն:

Ասվածը, մեր կարծիքով, ասացուցցների կարիք չունի, քանի վոր ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր քանի դոկտրինան ունի կապիտալիստական կարգը, վորն անտիփոն կերպով ուղեկցվում է ժողովրդական մասսաների աղքատութեամբ և հետամնացութեամբ, — ամբողջ պրոլետարիատը չի կարողանա բարձրանալ մինչ ցանկալի դիտակցականութիւնը, վոր, հետեւաբար, անհրաժեշտ է գլխակից դեկավարների մի խումբ, վորը սոցիալիստորեն լուսավորում է պրոլետարների բանակը, միացնում է նրան և ղեկավարում է նրան պայքարի ժամանակ: Պարզ է նույնպէս և այն, վոր կուսակցութիւնը, վորն իրեն նպատակ է դրել ղեկա-

<sup>1</sup> Մենք վոչինչ չենք ասում Ռուսաստանում յեղած մյուս կուսակցութիւնների մասին, վորովհետեւ մեր քննած հարցերը պարզաբանելու համար դրանց մասին խոսելու վոչ մի անհրաժեշտութիւն չկա:

վարել մարտնչող պրոլետարիատին, պետք է ներկայացնի վոչ թէ միայնակների պատահական կուտակում, այլ համախմբված, կենտրոնացված կազմակերպութիւն, վորպէսզի կարելի լինի նրա աշխատանքին ուղղութիւն տալ ըստ մասնական պլանի:

Այս է, համառոտակիորեն, մեր կուսակցութեան ընդհանուր ֆիզիոնոմիան:

Հիշենք այս ամենը և անցնենք մեր գլխավոր հարցին. մենք ո՞ւմ կարող ենք կոչել կուսակցութեան անդամ: Կուսակցական Կանոնադրութեան առաջին կետը, վորի առթիւ գրված է այս հոդվածը, վերաբերում է հենց այդ հարցին: Այսպէս ուրեմն, քննենք այդ հարցը:

Հետեւաբար, մենք ո՞ւմ կարող ենք կոչել Ռուսաստանի Սոց. Դեմ. Բանվորական Կուսակցութեան անդամ, այսինքն, վորո՞նք են կուսակցութեան անդամի պարտականութիւնները:

Մեր կուսակցութիւնը՝ սոցիալ-դեմոկրատական է: Դա նշանակում է, վոր նա ունի իր սեփական ծրագիրը (չարժաման մերձավորադուռն և վերջնական նպատակները), իր սեփական տակտիկան (պայքարի յեղանակները) և իր սեփական կազմակերպական սկզբունքը (միացման ձևը): Ծրագրային, տակտիկական և կազմակերպական հայացքների միասնութիւնը հանդիսանում է այն հողը, վորի վրա կառուցվում է մեր կուսակցութիւնը: Միմիայն այդ հայացքների միասնութիւնը կարող է կուսակցութեան անդամներին միացնել վորպէս մեկ կենտրոնացած կուսակցութիւն: Կլտորակիլի հայացքների միասնութիւնը — կլտորտակիլի և՛ կուսակցութիւնը: Հետեւաբար, կուսակցութեան անդամ կարելի չէ կոչել միայն նրան, ով լիովին ընդունում է կուսակցական ծրագիրը, տակտիկան և կազմակերպական սկզբունքը: Միայն նա, ով բավականաչափ ուսումնասիրել է լիովին ընդունել է մեր կուսակցութեան ծրագրային, տակտիկական և կազմակերպական հայացքները, կարող է լինել մեր կուսակցութեան շարքերում և դրա հետ մեկտեղ պրոլետարների բանակի ղեկավարների շարքերում:

Բայց կուսակցութեան անդամի համար, արդէ՞ք, բավական է միայն կուսակցական ծրագրի, տակտիկայի և

կազմակերպական հայացքները ընդունումը: Կարելի՞ յե, արդե՞րբ, այդպիսի մարդուն կոչել պրոլետարների բանակի իսկական ղեկավար: Իհարկե, վո՛չ: Նախ, բոլորին հայտնի յե, վոր աշխարհում քիչ շաղակրատներ գոյություն չունենն, վորոնք բավականութամբ «կընդունեն» կուսակցական ծրագրերը, տակտիկան և կազմակերպական հայացքները, բայց բացի շաղակրատանքից վոչ մի բանի ընդունակ չեն: Կուսակցության սրբություն-սրբոցի պղծումը կլիներ այդպիսի շաղակրատին կուսակցության անդամ (այսինքն՝ պրոլետարների բանակի ղեկավար) կոչելը: Ի դեպ, չե՞ վոր մեր կուսակցությունը փիլիսոփայական դպրոց, կամ կրոնական աղանդ չե: Մի՞թե մեր կուսակցությունը պայքարի կուսակցություն չե: Յե՛վ յեթե այդ այդպես ե, մի՞թե ինքնըստինքյան պարզ չե, վոր մեր կուսակցությանը չի բաժարարի իր ծրագրի, տակտիկայի և կազմակերպական հայացքների պլատոնական ընդունումը, վոր նա անտարակույս իր անդամից կպահանջի ընդունած հայացքների կենսագործումը: Նշանակում ե, ով ցանկանում ե լինել մեր կուսակցության անդամ, նա չի կարող բավականանալ մեր կուսակցության ծրագրային, տակտիկական և կազմակերպական հայացքների ընդունումով և պետք ե ձեռնամուխ լինի այդ հայացքների կենսագործմանը, դրանց անցկացմանը կյանքում:

Բայց կուսակցության անդամի համար ի՞նչ ե նշանակում կուսակցական հայացքների կենսագործումը: Յե՞րբ կարող ե նա կենսագործել այդ հայացքները: Միայն այն ժամանակ, յերբ նա պայքարում ե, յերբ նա ամբողջ կուսակցության հետ միասին ընթանում ե պրոլետարիատի բանակի առջևից: Հնարավո՞ր ե, արդե՞րբ, պայքարը միայնակ, ցածրուցրիվ: Իհարկե, վո՛չ: Ընդհակառակը, մարդիկ նախ միանում են, նախ կազմակերպվում են և հետո արդեն մարտի դնում: Առանց դրա սպարդյուն ե ամեն մի պայքար: Պարզ ե, վոր կուսակցության անդամները ևս միայն այն ժամանակ կկարողանան պայքարել և, հետևաբար, կենսագործել կուսակցական հայացքները, յերբ նրանք կմիանան համախորհված կազմակերպություն մեջ: Պարզ ե, նաև, թե վորքան ավելի համախորհված կազմա-

կերպության մեջ միանան կուսակցության անդամները, այնքան ավելի լավ նրանք կպայքարեն, հետևաբար, այնքան ավելի լրիվ կերպով կիրադործեն կուսակցության ծրագրերը, տակտիկան և կազմակերպական հայացքները: Իդուր չեն ասում, վոր մեր կուսակցությունը ղեկավարների կազմակերպություն ե, և վոչ թե միայնակները կուսակցում: Իսկ յեթե մեր կուսակցությունը ղեկավարների կազմակերպություն ե, ապա պարզ ե, վոր այդ կուսակցության, այդ կազմակերպության անդամ կարելի յե համարել միայն նրան, ով աշխատում ե այդ կազմակերպության մեջ, ավ, հետևաբար, իր պարտականությունն ե համարում իր ցանկությունները միաձուլել կուսակցության ցանկություններին և գործել կուսակցության հետ միասին:

Նշանակում ե՞ կուսակցության անդամության համար անհրաժեշտ ե կուսակցության ծրագրի, տակտիկայի և կազմակերպական հայացքների կենսագործումը. կուսակցության հայացքները կենսագործելու համար անհրաժեշտ ե պայքար հանուն այդ հայացքների. հանուն այդ հայացքների պայքարելու համար անհրաժեշտ ե աշխատանք կուսակցական կազմակերպության մեջ և կուսակցության հետ միատեղ աշխատանք: Պարզ ե, վոր կուսակցության անդամության համար անհրաժեշտ ե կուսակցական կազմակերպություններից մեկի մեջ մտնելը<sup>1</sup>: Միայն այն ժամանակ, յերբ մենք կմտնենք կուսակցական կազմակերպություններից մեկի մեջ և, այդպիսով, մեր անձնական շահերը կձուլենք կուսակցության շահերի հետ, — միայն այդ ժամանակ մենք

<sup>1</sup> Ինչպես ամեն մի բարդ որդանիվ բաղկացած ե անհամար քանակութամբ ամենազարդ որդանիվներից, այդպես և մեր կուսակցությունը, վորպես բարդ և ընդհանուր կազմակերպություն, բաղկացած ե բազմաթիվ ռայոնական, տեղական կազմակերպություններից, վորոնք կոչվում են կուսակցական կազմակերպություններ, յեթե նրանք հասաատված են կուսակցական համադրման, կամ կենտրոնական կոմիտեի կողմից: Ինչպես տեսնում եք, կուսակցական կազմակերպություններ են կոչվում վոչ միայն կոմիտեի կողմից: Այդ կազմակերպությունների աշխատանքին մի միասնական պլանով ուղղություն տալու համար գոյություն ունի կենտրոնական կոմիտե, վորի միջոցով այդ տեղական կուսակցական կազմակերպությունները կազմում են մի մեծ կենտրոնացած կազմակերպություն:

կկարողանանք դառնալ հուսակցութեան անդամներ և դրա հետ մեկտեղ պրոլետարները բանակի իսկական ղեկավարներ: Յեթե մեր հուսակցութունը միայնակ-չաղակրատները խաժամուժ չէ, այլ ղեկավարները կազմակերպութեամբ, վորը կենտրոնական կոմիտեյի միջոցով արժանաւոր կերպով առաջնորդում է պրոլետարների բանակը, ապա այդ ժամանակ ամբողջ վերն ասիածն ինքնըստինքյան պարզ է:

Անհրաժեշտ է նկատել նաև ահա թե ինչ:

Մինչև այսօր մեր հուսակցութունը նման էր նահապետական հյուրընկալ ընտանիքի, վորը պատրաստ էր ընդունելու բոլոր համակրողներին: Բայց այն բանից հետո, յերբ մեր հուսակցութունը դարձավ կենտրոնացած կազմակերպութեամբ, նա իրենից դեն դրեց նահապետական կերպարանքը և լիովին նմանվեց մի ամբողջի, վորի դռները կբացվեն միայն արժանավորների համար: Իսկ դա մեզ համար մեծ նշանակութուն ունի: Այն ժամանակ, յերբ ինքնակալութունը ջանում է ապականել պրոլետարիատի դասակարգային ինքնադիտակցութունը «տրեղյունիտիզմով», նացիոնալիզմով, կղերականութեամբ և այլն, յերբ, մյուս կողմից, լիբերալ ինտելիգենցիան համառորեն ջանում է ստրանել պրոլետարիատի քաղաքական ինքնազործունելութունը և նրա նկատմամբ խնամակալութուն ձեռք բերել, — այդ ժամանակ մենք պետք է խիստ զգոն լինենք և չպետք է մոռանանք, վոր մեր հուսակցութունը մի ամբողջ է, վորի դռները բացվում են միայն արժանավորների համար:

Մենք պարզաբանեցինք հուսակցութեան անդամութեան յերկու անհրաժեշտ պայմանները (ծրագրի ընդունումը և աշխատանքը հուսակցական կազմակերպութեան մեջ): Յեթե դրան ավելացնենք և յերրորդ պայմանը, վորը հուսակցութեան անդամին պարտավորեցնում է նյութական ոգնութունը ցույց տալ նրան, — այդ ժամանակ մեզ մոտ բուռն կլինեն բոլոր այն պայմանները, վորոնք տալիս են հուսակցութեան անդամի կոչումը կրելու իրավունք:

Նշանակում է, Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցութեան անդամ կարող է կոչվել նա, ով ընդունում է այդ հուսակցութեան ծրագիրը, հուսակցու-

թեանը նյութական ոգնութուն է ցույց տալիս և մասնակցում է հուսակցական կազմակերպութեանը մեկին:

Այս է հուսակցական կանոնադրութեան առաջին կետի սահմանումը, վորը տվել է ընկեր կենինը:<sup>1</sup>

Այս սահմանումը, ինչպես տեսնում եք, ամբողջովին բղիթում է այն հայացքից, ըստ վորի մեր հուսակցութունը կենտրոնացած կազմակերպութեամբ է, և վոչ թե միայնակների խաժամուժ:

Մրանումն է այդ սահմանման մեծագույն արժանավորութունը:

Բայց ահա գտնվեցին մի քանի ընկերներ, վորոնք խոտանում են լենինյան սահմանումը, վորպես «նեղ» և «անհարմար», և առաջարկում են իրենց սահմանումը, վորը, պետք է կարծել, չի լինի վոչ «նեղ», վոչ «անհարմար»: Մենք խոսում ենք Մարտովի<sup>2</sup> սահմանումի մասին, վորի քննութեանը մենք իսկույն կձեռնարկենք: Մարտովի սահմանումով՝ «ՌՍԴԲԿ անդամ է համարվում ամեն վոք, ով ընդունում է նրա ծրագիրը, ոգնում է հուսակցութեանը նյութական միջոցներով և ցույց է տալիս նրան անձնական կանոնավոր աջակցութուն նրա կազմակերպութեաններից մեկի ղեկավարութեամբ»:

Ինչպես տեսնում եք, այս սահմանումի մեջ բաց է թողված հուսակցութեան անդամութեան յերրորդ անհրաժեշտ պայմանը, ըստ վորի հուսակցութեան անդամները պարտավոր են մասնակցութուն ունենալ հուսակցական կազմակերպութեաններից մեկում: Այդ սահմանումը և անհրաժեշտ պայմանը, բանից դուրս է դալիս, Մարտովի գտել է ավելորդ և դրա փոխարեն իր սահմանումի մեջ մացրել է մշուշապատ և կասկածելի «անձնական աջակցութուն հուսակցական կազմակերպութեաններից մեկի ղեկավարութեամբ»: Դուրս է դալիս, վոր կարելի՞ յե լինել հուսակցութեան անդամ, չմտնելով հուսակցական վորեկ կազմակերպութեան մեջ (այ՛ք բեղ «հուսակցութուն») և իրեն պարտավոր չհա-

<sup>1</sup> Լենին — հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ահանավոր տեւարան և պրակտիկ:

<sup>2</sup> Մարտովի «Искра»-յի խմբագրիներից մեկն է:

մարելո՛վ յենթարկվել կուսակցութեան կամքին (ա՛յ քեզ «կուսակցական կարգապահութիւն»)։ Հապա ի՞նչպէս կարող ե կուսակցութիւնը «կանոնավոր» դեկավարել այն անձերին, վորոնք չեն մտնում կուսակցական վոչ մի կադմակերպութեան մեջ և վորոնք, հետեապես, իրենց անսպասանորեն սրբաբախելով չեն համարում յենթարկվել կուսակցական կարգապահութեանը։

Ահա մի հարց, վորի վրա ջախջախվում ե կուսակցական կանոնադրութեան առաջին կետի սահմանումը, վոր ավել ե Մարտովը, և վորը վարպետային լուծում ե ստանում Լենինի սահմանումով, քանի վոր դա վորոշակիորեն ընդունում ե կուսակցական կազմակերպութիւններից մեկին մասնակցելը, վորպէս յերրորդ և անհրաժեշտ պայման՝ կուսակցութեան անդամակցելու համար։

Մեզ մնում ե միայն դուրս գցել Մարտովի սահմանումից նրա մշուշապատ և իմաստից զուրկ «անձնական ոգնութիւնը կուսակցական կազմակերպութիւններից մեկի դեկավարութեամբ»։ Իսկ առանց այդ պայմանի, Մարտովի սահմանումի մեջ մնում ե միայն յերկու պայման (ծրագրի ընդունումը և նյութական ոգնութիւնը), վորոնք ինքնին վոչ մի դին չունեն, քանի վոր ամեն մի շաղակրատ կարող ե «ընդունել» կուսակցական ծրագիրը և ցույց տալ կուսակցութեանը նյութական ոգնութիւն, վոր ամենեւին իրավունք չի աւելիս նրան կուսակցութեան անդամ լինելու։

Ահա ձեզ և «հարմա՛ր» սահմանում։

Մենք ասում ենք, վոր կուսակցութեան իսկական անդամները վոչ մի դեպքում չպետք ե բաւականանան միայն ընդունելով կուսակցական ծրագիրը, վոր նրանք անպայման պետք ե ջանան իրագործել ընդունած ծրագիրը։ Մարտովը պատասխանում ե՝ ծայրաստիճան խիստ եք վարվում, քանի վոր կուսակցութեան անդամի համար այնքան ել անհրաժեշտ չե ընդունած ծրագրի իրագործումը, յեթե նա չի հրաժարվում կուսակցութեանը նյութապէս ողնելուց և այլն։ Մարտովը կարծես թե խղճում ե մի քանի շաղակրատ «սոցիալ-դեմոկրատների» և չի ուզում նրանց առաջ իրակել կուսակցութեան դռները։

Այնուհետեւ մենք ասում ենք, թե քանի վոր ծրագիրն

իրագործելու համար անհրաժեշտ ե պայքար, իսկ պայքարի համար՝ միավորում, այդ իսկ պատճառով կուսակցութեան ապագա անդամի պարտքն ե՝ մտնել կազմակերպութիւններից մեկի մեջ, ձուլել իր ցանկութիւնները կուսակցութեան ցանկութիւնների հետ և կուսակցութեան հետ միասին դեկավարել պրոլետարների մարտական բանակը, այսինքն՝ կազմակերպվել կենտրոնացված կուսակցութեան միաձուլ ջոկատների մեջ։ Մարտովը պատասխանում ե՝ կուսակցութեան անդամների համար այնքան ել անհրաժեշտ չե կադմակերպվել միաձուլ ջոկատների մեջ, միավորվել կազմակերպութեան մեջ, կարելի չե յուրազնայ և միայնակ պայքար մղելով։

Ուրեմն ի՞նչ բան ե մեր կուսակցութիւնը, — հարցնում ենք մենք, — միայնակների պատահական կուտակում, թե՞ դեկավարների համախմբված կազմակերպութիւն։ Յեվ յեթե նա դեկավարների կազմակերպութիւն ե, կարելի՞ չե, արդո՞ք, այդ կազմակերպութեան անդամ համարել նրան, ով նրա մեջ չի մտնում, ով, հետեապես, իր անհրաժեշտ պարտականութիւնը չի համարում յենթարկվել նրա կարգապահութեանը։ Մարտովը պատասխանում ե, թե կուսակցութիւնը կազմակերպութիւն չե կամ, ավելի ճիշտ, կուսակցութիւնն անկազմակերպ կազմակերպութիւն ե (տհա՛ճե՛զ և՛ «ցենտրալիզմ»)։

Ինչպէս յերևում ե, Մարտովի կարծիքով, մեր կուսակցութիւնը կենտրոնացված կազմակերպութիւն չե, այլ՝ խաժամուժ, տեղական կազմակերպութիւնների և «սոցիալ-դեմոկրատական» միայնակների կուտակում, վորոնք ընդունել են մեր կուսակցական ծրագիրը և այլն։ Բայց յեթե մեր կուսակցութիւնը կենտրոնացված կազմակերպութիւն չե, ապա նա չի ներկայացնելու մի ամբողջ, վորի դռները կարող են բացվել միայն արժանավորների համար։ Յեվ, հիրավի, Մարտովի համար, ինչպէս այդ յերևում ե նրա սահմանումից, կուսակցութիւնն ամբողջ չե, այլ՝ բանկետ, վորի մուտքն ազատ ե ամեն մի համակրողի համար։ Մի վորը գիտելիքներ, նույնքան ել համակրանք, մի քիչ նյութական ոգնութիւն, և դործը պատրաստ ե. դուք լիակատար իրավունք ունեք կուսակցութեան անդամ համարվելու։

Մի՛ լսե՛ք,—խրախուսում ե Մարտովն ահարեկված «կուսան-  
դամներին»,—մի՛ լսե՛ք միքանի մարդկանց, վորոնց կար-  
ծիքով կուսակցութեան անդամը պարտավոր ե մտնել կու-  
սակցական կազմակերպութեաննորից մեկի մեջ և այդպիսով  
իր ցանկութեաննորը յենթարկել կուսակցութեան ցանկու-  
թեաննորին: Առաջինը՝ մարդու համար դժվար ե համա-  
ձայնել այդ պայմաններին, չե՞ վոր կատակ չե իր ցանկու-  
թեաննորը յենթարկել կուսակցութեան ցանկութեաննորին:  
Իսկ յերկրորդ՝ յես իմ բացատրութեան մեջ արդեն նշեցի,  
վոր այդ մի քանի մարդկանց կարծիքը սխալ ե: Ուրեմն  
չնո՛րհ արե՛ք, սրբոններ, համեցե՛ք... բանկետի:

Մարտովը կարծես թե խղճում ե միքանի պրոֆեսոր-  
ների և դիմադրիստների, վորոնք սիրտ չեն անում յենթար-  
կել իրենց ցանկութեաննորը կուսակցութեան ցանկութեան-  
նորին, կուսակցական կարգապահութեանը, և այդպիսով  
մեր կուսակցութեան ամբողջում ճեղքվածք ե բացում, վորի  
միջով այդ հարկերի պարոնները կարող են մաքսանենք կեր-  
պով սողոսկել մեր կուսակցութեան մեջ: Նա բացում ե դըռ-  
ներն սպորտունիդի առաջ, և այդ այն ժամանակ, յերբ  
պրոլետարիատի դասակարգային ինքնադիտակցութեան վրա  
ճնշում են գործ դնում հազարավոր թշնամիներ:

Բայց այդ չե ամենը: Բանն այն ե, վոր Մարտովի կա-  
կածելի սահմանումի պատճառով մեր կուսակցութեան մեջ  
ոպորտունիդի հնարավորութեան ե ծագում նաև մի այլ  
կողմից:

Մարտովի սահմանումի մեջ, ինչպես մենք գիտենք,  
խոսքը վերաբերում ե միայն ծրագրին ընդունելուն, իսկ  
տակտիկայի և կազմակերպման մասին՝ վոչ մի հնչյուն,  
մինչդեռ կուսակցութեան միասնութեան համար կազ-  
մակերպական և տակտիկական հայացքների միասնու-  
թեանն անհրաժեշտ ե նույն չափով, ինչպես և նրանց ծրա-  
դրային հայացքների միասնութեանը: Մեզ կասեն, թե այդ  
մասին չի խոսվում նաև ընկ. Լենինի սահմանումի մեջ:  
Ճի՛շտ ե: Բայց, չե՞ վոր ընկեր Լենինի սահմանումի մեջ  
կարի՛ք ել չկա այդ մասին խոսելու: Մի՞թե ինքնին պարզ  
չե, վոր ով աշխատում ե կուսակցական կազմակերպու-  
թեաննորից մեկում և, հետևապես, սրայբարում ե կուսակ-

ցութեան հետ միասին, յենթարկվում ե կուսակցական կար-  
գապահութեանը, չի կարող հեռուել վորեւե այլ տակտիկայի  
և կազմակերպական այլ սկզբունքների, բացի կուսակցու-  
թեան տակտիկայից և կուսակցութեան կազմակերպական  
սկզբունքներից: Բայց ի՞նչ կասե՛ք դուք այն «կուսանդամի»  
մասին, վորն ընդունել ե կուսակցական ծրագրերը, բայց չի  
դա՛նվում կուսակցական և վոչ մի կազմակերպութեան մեջ:  
Ի՞նչ յերաշխիք, վոր այդ «անդամի» տակտիկան և կազմա-  
կերպական հայացքները կլինեն կուսակցական, և վոչ թե  
այլ տեսակի: Ահա թե ի՛նչը չի կարող բացատրել մեզ  
Մարտովի սահմանումը: Յե՛վ վորպես Մարտովի սահմա-  
նումի արդյունք, մեր ձեռքում պետք ե մնա մի տարրի-  
նակ «կուսակցութեան», վորի «անդամները» ունեն միա-  
տեսակ ծրագիր (դա դեռ հա՛րց ե), իսկ տակտիկական և  
կազմակերպական հայացքներ՝ դանազա՛ն: Իրեպակա՛ն  
բազմապիսութեան: Ել ինչո՞վ մեր կուսակցութեանը չի  
նմանվելու բանկետի:

Միայն մի բանի մասին պետք ե հարցնել. ո՞ւր դցել  
այն իրեական և դործնական ցենտրալիզմը, վոր կտակել ե  
մեզ կուսակցական յերկրորդ համազումարը և վորին ար-  
ժատապես հակասում ե Մարտովի սահմանումը: Անկաս-  
կած, յեթե բանը հասնի ընտրութեանը, ապա ավելի ճիշտ  
կլիներ դուրս դցել Մարտովի սահմանումը:

Ահա թե Մարտովն ինչ անհեթեթ սահմանում ե հրամ-  
ջնում մեզ՝ ի հակակշիռ ընկեր Լենինի սահմանումի:

Մենք թերամտութեան արդյունք ենք համարում կու-  
սակցական յերկրորդ համազումարի վորոշումը, վորը (հա-  
մազումարը) ընդունեց Մարտովի սահմանումը, և հույս  
ենք հայտնում, վոր կուսակցական յերրորդ համազումարն  
անտարակույս կողզի յերկրորդի սխալը և կընդունի ընկեր  
Լենինի սահմանումը:

Համառոտակի կրկնենք ավա՛ծը: Պայքարի ասպարեզ ե  
դուրս յեկել պրոլետարների բանակը: Յեթե ամեն մի բա-  
նակ կարիք ունի իր առաջավոր ջոկատի, ապա այդ բանակն  
ել պետք ե կարիք ունենա այդպիսի ջոկատի: Այստեղից ել  
պրոլետարական ղեկավարների խմբի՝ Ռուսաստանի Սո-  
ցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցութեան յերե-

վալը: Վորպես վորոչ բանակի տառապանք շոկատ, այդ կուսակցութիւնը, առաջինը, պետք է զինված լինի իր սեփական ծրագրով, տակտիկայով, և կազմակերպական սկզբունքով և, յերկրորդ, պետք է ներկայացնի համախմբված կազմակերպութիւն: Յեթե հարցնելու լինենք, թե մենք ո՞ւմ պիտի անվանենք Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցութեան անդամ, ապա այդ կուսակցութիւնը կարող է տալ միայն մեկ պատասխան՝ նրան, ով ընդունում է կուսակցութեան ծրագիրը, նյութապես ողնում է կուսակցութեանը և աշխատում է կուսակցական կազմակերպութիւններին մեկում:

Հենց այդ ակնբախ ճշմարտութիւնն է, վոր արտահայտել է ընկեր Լենինն իր սքանչելի սահմանումով:

«Գրուեաբիտի պաշտօրը» № 8,  
1905 թ. հունվարի 1 (14):



Խմբագիր Արմա Հարենց  
Մտիլիստական համեմատութիւն Պ. Արեւյան  
Տեխն. լսմբ. Ս. Խաչատրյան  
Սըբազրիչ Ս. Մանուկյան  
Կոնսրու սըբազրիչ Լ. Արովյան

Գլավիլիտի լիազոր Վ. 1095, հրատ. № 789  
Պատվեր № 43, տիրած 7000  
Թղթի չափսը 72x105 1/32 (66.880 տպ. նիշ. 1 տպ.  
մամուլում) 1/2 տպ. մամուլ 1/4 թերթ թուղթ  
Հանձնված է արտադրութեան 8/11 1940 թ.  
Ստորագրվել է տպագրելու 27/11 1940 թ.  
Գինը 20 կ.

Քաղաքական գրականութեան պետական հրատարակչութեան տպագրան,  
Յերևան, Ալլահվերդյան № 65

«Ազգային գրադարան»



NL0183038

9-1-66, 20 4.

И. СТАЛИН

КЛАСС ПРОЛЕТАРИЕВ И ПАРТИЯ  
ПРОЛЕТАРИЕВ

ПО ПОВОДУ ПЕРВОГО ПУНКТА  
УСТАВА ПАРТИИ

Государственное издательство политической литературы  
Москва ● 1940